ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 փետրվարի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

9
(3218)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

40 ՀԱՋԱՐ ԴՈԼԱՐ ՍՐՏԻԿՆԵՐԻ ԵՎ ԹՄԲՈՒԿՆԵՐԻ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի երաժշտական տաղանդի բացահայտումը բավականին թանկ է նստել իշխող կուսակցության, ինչպես նաեւ գործարար նվիրատուների վրա: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ 16 մլն դրամից ավել է ծախսվել այդ շոու երեկոյի վրա:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջին ամիսներին սոցիալական ցանցերում ակտիվորեն հրապարակում էր տեսանյութեր՝ հարվածային գործիքներ նվագելով: Նրա սրտիկները ուղեկցվեցին ոչ միայն Ջեմֆիրայի, Maroon 5-ի, Eminem-ի եւ այլ արտիստների երգերով, այլեւ հայտնի արտիստների երգերով եւ իր նվագակցությամբ: Փաշինյանը հարվածային գործիքներ էր նվագում, իսկ ավելի ուշ իր իսկ կազմավորած երաժշտական բենդի մասին հայտնեց եւ հրավիրեց «Վարչաբենդի» առաջին համերգին:

Ովքե՞ր մասնակցեցին Փաշինյանի կազմավորած երաժշտական խմբի՝ «Վարչաբենդի» համերգին: Նա հրավիրեց թիմակիցներին ու նախապես մանրակրկիտ ուսումնասիրված եւ գրանցված մասնակիցներին՝ հունվարի 30-ին Ջրվեժում գտնվող Palladium Hall-ում վայելելու «Վարչաբենդի» առաջին փակ ելույթը:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ վարչապետի աշխատակազմին՝ պարզելու միջոցառման ֆինանսավորման աղբյուրն ու ծախսերի չափը: Տեղեկացրին, որ «Վարչաբենդի» հետ կապված բոլոր ծախսերը իրականացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Այս հարցով ArmLur.am-ը պաշտոնական հարցում է ուղարկել կուսակցությանը, որի պատասխանը ստանալուն պես այն կհրապարակենք:

Մինչ այդ, ArmLur.am-ը լրագրողական հետաքննության շրջանակում կապ հաստատեց Palladium Hall-ի հետ՝ չներկայանալով որպես լրագրող, եւ պարզեց սրահում միջոցառում անցկացնելու սակագները: Մասնավորապես, մինչեւ 500 անձի համար նախատեսված սրահի դեպքում մեկ մասնակցի արժեքը սկսվում է 27 հազար դրամից: Այս հաշվարկով միայն սրահի սպասարկման արժեքը կարող է կազմել մոտ 13,5 մլն դրամ: Բացի այդ, սրահում երաժշտական գործիքների օգտագործման համար սահմանված է առանձին վճար՝ 600 հազար դրամ՝ անկախ նրանից, թե խումբը ով է ներկայացնում: Սրահում առկա 18 հոգանոց երաժշտական խմբի ծառայության արժեքը կազմում է եւս 1 մլն դրամ, որի համար եւս վճարելը պարտադիր է: Այսպիսով՝ միայն երաժշտական ապահովման համար անհրաժեշտ է շուրջ 1,6 մլն դրամ: Միասին դարձավ 15.1մլն դրամ կամ մոտ 40 հազար ԱՄՆ դոլար մոտ 500 մասնակցի դեպքում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փետրվարի 9-ի արտահերթ նիստում հաստատել է 2026 թվականի հունիսի 7-ին նշանակված ԱԺ հերթական ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը: Այսպիսով, կուսակցությունը, կուսակցությունների դաշինքն ընտրություններին մասնակցելու համար օգտահաշիվ ստանալու նպատակով էլեկտրոնային եղանակով դիմում է ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով փետրվարի 9-ից մինչեւ ապրիլի 23-ը: Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են ապրիլի 13-ից մինչեւ ապրիլի 23-ը՝ ժամը 18:00-ն: Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է ապրիլի 23-ից մինչեւ մայիսի 3-ը՝ ժամը 18:00-ն: Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հերթական համարները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վիճակահանությամբ տրամադրվում են մինչեւ մայիսի 3-ը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Ռուզաննա Երեմյանը՝ «Հակոբ Կոնջորյան» կրթահամալիրի տնօրենը, անտեսելով իր ծառայողական պարտականությունները, աշխատանքային ժամին զբաղվում է բացահայտ կուսակցական քարոզչությամբ: Մինչ կրթահամալիրում ընթանում է դասապրոցեսը, տնօրենը սոցիալական ցանցերում զբաղված է քաղաքական ինքնագովազդով՝ իր ֆեյսբուքյան էջում հայտարարելով, որ ընդգրկվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների համամասնական ցուցակում: ««Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության սիրելի ընկերներ, թիմակիցներ, պատվիրակներ, ինչպես գիտեք, կուսակցության վարչության որոշմամբ ես նույնպես ընդգրկվել եմ 2026 թվականի խորհրդարանական հերթական ընտրությունների համամասնական ցուցակում: Քաղաքական թիմի սիրելի ընկերներ, պատվիրակներ, հաշված օրեր են մնացել, որպեսզի դուք որոշում կայացնեք: Ազգային ժողովի առաջիկա ընտրություններում հավակնում եմ ձեր աջակցությանը»,-գրել է Երեմյանը: Փաստորեն, պետական կրթական հաստատության ղեկավարը, մոռանալով իր պաշտոնական առաքելության մասին, ամբողջությամբ «լծվել» է մեկ նպատակի՝ ամեն գնով մանդատ ձեռք բերելուն:

⇨ ***էջ 5***



The Guardian-ը գրում է, որ Ադրբեջանի եւ Հայաստանի օլիմպիական թիմերի միջեւ առաջացած հակասությունը գեղասահքի երաժշտության պատճառով լուծվել է. մրցավարներն ու ՄՕԿ-ը վերանայել են հարցը, իսկ պաշտոնական ծրագիրը փոփոխվել է: Հիշեցնենք, որ Ադրբեջանը բողոքել էր Հայաստանը ներկայացնող զույգի՝ «Արցախ» ստեղծագործությունը կարճ ծրագրում օգտագործելու կապակցությամբ: Ադրբեջանական թիմը նշել էր, որ երաժշտության օգտագործումը կարող է բերել քաղաքական ուղերձների՝ հակասելով Օլիմպիական կանոնակարգին: Այժմ պաշտոնական ցանկում ստեղծագործությունը նշված է պարզապես որպես «Երաժշտություն՝ Արա Գեւորգյանից», առանց «Արցախ» անվանման:

ԶՐՈՒՅՑ

«ՄԻԱԿ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ ՄԵՆՔ ՉԵՆՔ ԵՂԵԼ»

Հարցազրույց Ազգային Ժողովի Քաղաքացիական պայմանագիր խմբակցության պատգամավոր Հրաչյա Հակոբյանի հետ:

-Պարո՛ն Հակոբյան, ի՞նչ զգացողություն ունեցաք, երբ Նիկոլ Փաշինյանը՝ Ձեր փեսան, իշխանությունը «վերցրեց»:

-Հեղափոխության օրերից ինչ-որ պահից արդեն սպասելի էր ու ակնհայտ դարձավ, որ այլ ճանապարհ չկա, երկրում պետք է լինի հեղափոխություն: Իսկ նախորդ տարիներին չասեմ՝ սպասում էինք, թե չէ, բայց գիտեինք, որ մի օր պետք է լինի: Ես ինքս սպասում էի, ես գիտեի, որ մեզ մի օր հաջողվելու է, քանի որ մենք միշտ անկեղծ ենք եղել ժողովրդի հետ, ինչպես եւ հիմա:

-Ինչպե՞ս թատրոնից եկաք քաղաքականություն, հե՞շտ էր ադապտացիան:

-Ես ինքս եմ ընտրել իմ մասնագիտությունը, իսկ ինչպես եղավ այդ՝ քաղաքականություն մտնելը, դա սովորելուն զուգահեռ է եղել: Ես ուսանողական տարիներին միշտ մասնակցել եմ ընդդիմության հանրահավաքներին: Ինձ միշտ ասում են՝ եթե Նիկոլ Փաշինյանը չլիներ Ձեր փեսան, Դուք կմասնակցեի՞ք հանրահավաքներին, թե՞ ոչ. ասեմ, որ դա շատ օրգանիկ է եղել ու այսօր ես կդժվարանամ պատասխանել: Երբ նա ընդդիմադիր լրագրող էր եւ մուտք գործեց քաղաքականություն, ես ավտոմատ կերպով ինքս մասնակցել եմ եւ սկզբում միգուցե գնում էի, որովհետեւ իմ փեսան էր ելույթ ունենալու, բայց ինչ-որ պահից սկսեցի կրել այդ գաղափարները որպես քաղաքացի եւ հասկացա, որ դրանք իմ արժեքներն են նույնպես: Այդ ամենը եղել է զուգորդված, բացի իմ մշակութային կյանքից՝ նաեւ ակտիվ քաղաքացի եմ եղել:

-Պատկերացնո՞ւմ էիք, որ Նիկոլ Փաշինյանի շնորհիվ դառնալու եք պատգամավոր:

-Չէի մտածում այդ ուղղությամբ, 2017 թվականին ռեյտինգային ընտրակարգով թեկնածությունս առաջադրել էի, եւ նույն թվականին ես Շենգավիթ եւ Մալաթիա-Սեբաստիա համայնքներում երրորդ տեղն էի ամենաշատ ձայները հավաքել: Առաջին տեղում Արարատ Միրզոյանն էր, երկրորդ տեղում Արայիկ Հարությունյանն էր, երրորդ տեղում ես էի: 2018 թվականի հեղափոխությունից հետո Արարատ Միրզոյանը իր մանդատը դրեց, գնաց փոխվարչապետ, Արայիկ Հարությունյանը չվերցրեց իր մանդատը, գնաց կառավարություն, եւ արդեն երրորդ ամենաշատ ձայներ ստացած ռեյտինգային ընտրակարգով ես էի, եւ ես վերցրեցի մանդատս եւ արդեն 2018 թվականից աշխատում եմ:

-Ձեր իշխանության ժամանակ Արցախը «կորցրեցինք», մեղքի զգացում ունե՞ք:

-Ես իմ քաղաքական թիմի հետ կրում եմ բոլոր պատասխանատվությունները, եթե Արցախի կորուստը միայն մեր քաղաքական թիմի աշխատանքի արդյունքում է տեղի ունեցել, ես կիսում եմ իմ քաղաքական թիմի պատասխանատվությունը ամբողջությամբ, իսկ ինչ վերաբերվում է Արցախի կորստին, կարող եմ ասել մեր մասով մենք կրել ենք այդ պատասխանատվությունը եւ միակ մեղավորները մենք չենք եղել, եւ մենք չենք վախեցել դրա մասին խոսել: Ինչպես վարչապետը ասել էր, ինքը միակ մեղավորը չի, իսկ մնացածը միշտ խուսափում են իրենց համարել, որ իրենք ունեն իրենց մեղքի բաժինը: Խոսքս նաեւ վերաբերվում է նախկին երեք նախագահներին եւ այդպես էլ որեւէ մեկը չունեցավ այն համարձակությունը, որպեսզի ասի՝ ես էլ ունեմ այդ պատասխանատվության զգացողությունը:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ՝ ՎԵՆՍԻՆ

ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը ֆեյսբուքի իր էջում գրում է.

«ԱՄՆ փոխնախագահին ուղղված նամակս այսօր հանձնել եմ:

Նամակում առանձնակի ընդգծել եմ Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց հարցը, որոնք շարունակում են գտնվել ապօրինի կալանքի տակ՝ միջազգային իրավունքի բացահայտ խախտմամբ: Նրանց պահումն ու ցմահ դատապարտումները ոչ միայն մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում են, այլեւ՝ քաղաքական ճնշման եւ շանտաժի գործիք:

Միեւնույն ժամանակ բարձրացրել եմ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքների օկուպացիայի խնդիրը: ՀՀ տարածքներում ադրբեջանական զինված ստորաբաժանումների շարունակական ներկայությունը միջազգային իրավունքի լուրջ խախտում է եւ ուղիղ սպառնալիք՝ տարածաշրջանային անվտանգության: Սա պահանջում է հստակ միջազգային քաղաքական գնահատական եւ գործողություն:

Երբ ռազմագերիները պահվում են որպես առեւտրի առարկա, իսկ ինքնիշխան պետության տարածքները՝ ուժի կիրառմամբ վերահսկվում են, լռությունը այլեւս չեզոք դիրքորոշում չէ:

Լռությունը համակեցություն է անարդարության հետ:

Հայաստանում եւ տարածաշրջանում մարդու իրավունքները, խոսքի ազատությունը, ՀՀ-ում առկա քաղբանտարկյալների իրավունքները եւ պետական ինքնիշխանությունը չեն կարող զոհաբերվել աշխարհաքաղաքական հաշվարկներին»:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ՎՃԱՐՎԵԼՈՒ ԵՆ ԱՆԿԱՆԽԻԿ

2026 թ. ապրիլի 1-ից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կենսաթոշակները եւ նպաստները վճարվելու են բացառապես անկանխիկ եղանակով:

2026 թ. մարտի 5-ից կենսաթոշակը կամ նպաստը կանխիկ եղանակով ստացող եւ վճարման եղանակի փոփոխության դիմում չներկայացրած քաղաքացիների բանկի ընտրությունը կատարվելու է ինքնաշխատ եղանակով՝ առանց դիմումի: Ընդ որում, մարտի 5-ից ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում բանկի փոփոխության դիմումներ չեն ընդունվելու:

Տեղեկացնում ենք նաեւ, որ բանկի կողմից սուրհանդակային ծառայության միջոցով առաքվելու են բացառապես տեղաշարժման սահմանափակում ունեցող քաղաքացիների քարտերը՝ անհրաժեշտության դեպքում նաեւ սոցիալական աշխատողների ներկայությամբ:

Բոլոր կենսաթոշակառուներին եւ նպաստառուներին, ովքեր իրենց կենսաթոշակը կամ նպաստը դեռեւս ստանում են կանխիկ, խնդրում եւ կոչ ենք անում մինչեւ 2026 թ. մարտի 5-ը ներկայացնել վճարման եղանակի փոփոխության դիմումներ՝ առցանց՝ https://online.ssa.am հարթակի միջոցով կամ այցելելով Միասնական սոցիալական ծառայության ցանկացած տարածքային կենտրոն:

ՄԵՂԱԴՐԱՆՔ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՆ

Արեւմտյան երկրների վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունները «ուժեր են կուտակում» եւ նախապատրաստվում են Բելառուսում «սահմանադրական կարգի» փոփոխությանը, հայտարարել է Ռուսաստանի Արտաքին հետախուզության ծառայությունը (ԱՀԾ): Գերատեսչության վարկածով՝ գործողությունը թիրախավորում է 2030 թվականի նախագահական ընտրությունները, իսկ դրա իրականացման համար ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի եւ Լեհաստանի հասարակական կազմակերպություններն ու հիմնադրամները «բելառուսական հասարակության մեջ փնտրում են նոր լիբերալ պասիոնարների»: Ի թիվս այլոց, Արեւմուտքում հույս ունեն «թուլացնել Մինսկի եւ Մոսկվայի կապը Միութենական պետության շրջանակներում եւ դժվարացնել Ռուսաստանի համար Ուկրաինայում ռազմական գործողության նպատակներին հասնելը»՝ ընդգծել է հետախուզությունը:

Միեւնույն ժամանակ, ԱՀԾ-ն վստահեցրել է, որ բելառուսներն այլեւս դուրս չեն գա զանգվածային բողոքի ցույցերի, որոնք համակել էին երկիրը 2020 թվականի նախագահական ընտրություններից հետո, երբ Լուկաշենկոն պարտվել էր Սվետլանա Տիխանովսկայային՝ իր մրցակիցներից մեկի կնոջը, ով գտնվում էր բանտում: «Բելառուսական հասարակությունը, հաղթահարելով թշնամական արտաքին ուժերի կողմից բեմադրված 2020 թվականի ներքաղաքական ճգնաժամը, լավ «պատվաստում» է ստացել երկրում իրավիճակը տատանելու փորձերի դեմ», - ընդգծել են ԱՀԾ-ում: Ընդհանուր առմամբ, Բելառուսում 2020 թվականի հանրահավաքների մասնակիցների դեմ հարուցվել է ավելի քան 4,7 հազար քրեական գործ, իսկ ՄԱԿ-ը հայտնել է ձերբակալվածների խոշտանգումների հարյուրավոր դեպքերի մասին:

2025 թվականի հունվարին Լուկաշենկոն վերընտրվել է յոթերորդ ժամկետով՝ Բելառուսի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարկածով ստանալով ձայների 86,82%-ը: Այսպիսով, նա ռեկորդ է սահմանել իր իշխանության 30 տարիների ընթացքում: Մինչ այդ նրա առավելագույն արդյունքը 2015 թվականին եղել է 83,4%-ը: Արեւմտյան երկրները չեն ճանաչել ընտրությունները՝ դրանք անվանելով «ֆիկցիա» (կեղծիք): Միեւնույն ժամանակ, քաղաքացիների շրջանում հուզումներից խուսափելու համար երկրում սահմանափակվել է համացանցի հասանելիությունը: Ինքը՝ Լուկաշենկոն, հայտարարել է, որ 2020 թվականի իրադարձություններից հետո այնպիսի քաղաքականություն է վարել, որ «ժողովուրդը չկարողանա բերանը բացել»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՏԱՑԵԼ ԵՆ

Վենսի աշխատակազմը հաստատել է Բագրատ Սրբազանի նամակի ստացումը եւ շնորհակալություն հայտնել դրա համար, հայտնում է Christian Solidarity International-ը (CSI):

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսն երեկ ժամանել է Հայաստան եւ շուտով կայցելի Ադրբեջան:

Անցյալ շաբաթ CSI-ին հաջողվել է բանտում այցելել արքեպիսկոպոս Բագրատ Գալստանյանին եւ մենք ստացել ենք նրա կողմից ստորագրված նամակը՝ ԱՄՆ փոխնախագահին փոխանցելու համար: Վենսի աշխատակազմը հաստատել է այդ նամակի ստացումը եւ հայտնել իր երախտագիտությունը:

CSI-ն բարձր է գնահատում փոխնախագահի թիմի համագործակցությունն ու ներգրավվածությունը եւ աղոթում է, որ այս այցը թեթեւացում բերի հալածյալներին:

Մենք վստահ ենք, որ փոխնախագահն ուշադրությամբ կընդունի Սրբազանի ուղերձը եւ.

- կապահովի Ադրբեջանում եւ Հայաստանում պահվող հայ քրիստոնյա քաղաքական բանտարկյալների ազատ արձակումը,
- կհասնի Արցախից բռնի տեղահանված հայերի՝ իրենց բնօրրան անվտանգ վերադարձի երաշխիքներին՝ նրանց հիմնարար իրավունքների լիակատար պաշտպանությամբ:

ՀՀ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանը հանդիպել է Սալոնիկի Արիստոտելի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Կիրիակոս Անաստասիադեսի հետ:

Հունաստանում ՀՀ դեսպանության տարածած հաղորդագրությունից հանդիպմանը դեսպան Մկրտչյանը բարձր է գնահատել Արիստոտելի համալսարանի եւ Երեւանի պետական համալսարանի միջեւ երկու տասնամյակից ավելի գործող համագործակցությունը՝ ներառյալ «Յասոն» ծրագրի շրջանակներում: Դեսպանը նշել է, որ ծրագիրը վերջերս հաջողությամբ վերամեկնարկել է, եւ առաջարկել է ռեկտորին ընդարձակել ծրագրի շրջանակները՝ ներառելով ոչ միայն ուսանողներ, այլ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին:

Միաժամանակ քննարկվել են մի շարք ֆակուլտետների հետ համագործակցություն մեկնարկելու հնարավորությունները:

Դեսպանը մանրամասն ներկայացրել է կրթության ոլորտում Հայաստանի եւ Հունաստանի միջեւ վերջին ժամանակահատվածում գրանցված ինտենսիվ համագործակցությունը, ինչպես նաեւ դեսպանության համագործակցությունը հունական այլ ուսումնական հաստատությունների հետ:

Հանդիպմանը մասնակցել է Սալոնիկում ՀՀ պատվո հյուպատոս Ակիս Դագազիանը:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾԸ ԿԱՐՃՎԵՑ

Սեպտեմբերի 16-ին Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի անունը տվել էին մարդ ծեծելու դեպքով: Կոմիտեի ղեկավարը բացառում էր իր մասնակցությունը կամ հրահանգը դեպքին: Դեպքի առթիվ նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից ֆիզիկական ներգործությունը) եւ 191-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից մարդուն առեւանգելը):

Կադաստրի կոմիտեի նախկին աշխատակից Վերոնիկա Մելքոնյանը լրատվամիջոցներին պատմել էր, որ կոմիտեի նախագահի հանձնարարությամբ են իր ամուսնուն առեւանգել եւ ծեծել: Վերոնիկա Միքայելյանը ստացել է դաժանաբար ծեծված ամուսնու հետազոտությունների ամբողջական պատկերը. մեկ աչքը չի տեսնում, ծնոտը փշրված է, կողոսկրերը՝ կոտրված: Վերոնիկան էլ, ամուսինն էլ Կադաստրի պետական կոմիտեի նախկին աշխատակիցներ են, կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի հետ լարված հարաբերություններ են ունեցել ու պնդում են՝ հաշվեհարդարը հենց Կադաստրի գործող պետի հրահանգով է եղել:

Արդյունքում, դիմեցինք ՀՀ քննչական կոմիտե՝ հասկանալու համար, թե այս քրեական վարույթը ինչ փուլում է, եւ եթե այն կարճվել է, ապա ինչ հիմքով: Ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին, որ հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում նախաձեռնված թիվ 12846425 քրեական վարույթով նախաքննության ընթացքում որոշում է կայացվել երկու մեղադրյալների վերաբերյալ քրեական վարույթից թիվ 69147925 քրեական վարույթն անջատելու մասին, որի նախաքննության շրջանակներում որոշում է կայացվել երկու անձի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիմքով /տուժողի եւ հանցանք կատարած անձի հաշտության հիմքով դադարեցնելու մասին:

Այնուհետեւ, թիվ 69147925 քրեական վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա (այն է՝ կայացվել է անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, եւ սպառվել են վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները):

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԿԼԻՆԵՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն հայտարարել է, որ մինչեւ 2030 թվականի վերջը Թուրքիայի սահմանից մինչեւ Ադրբեջանի եւ Հայաստանի սահմաններ տանող վրացական մայրուղու գրեթե բոլոր հիմնական հատվածների շինարարական աշխատանքներն ավարտված կլինեն: Այս մասին Կոբախիձեն խոսել է PosTV հեռուստաալիքի եթերում:

Նա ընդգծել է, որ Վրաստանի կառավարությունը ձգտում է առավելագույնի հասցնել երկրի ռազմավարական դիրքը եւ այդ նպատակով զարգացնում է իր տրանսպորտային ենթակառուցվածքները:

«Մենք ձգտում ենք առավելագույնի հասցնել մեր երկրի ռազմավարական դիրքը, եւ մեր նպատակներից մեկը տրանսպորտային ենթակառուցվածքների եւ տարանցիկ գործառույթների զարգացումն է», - ասել է Կոբախիձեն:

Կառավարության ղեկավարը նշել է՝ այս ոլորտում շատ մեծ ներդրումներ են կատարվում: «Մեր ծրագրի համաձայն՝ մինչեւ 2030 թվականի վերջը Թուրքիայի սահմանից մինչեւ Ադրբեջանի եւ Հայաստանի սահմաններ տանող ճանապարհի գրեթե բոլոր հիմնական հատվածները կավարտվեն», - ասել է Կոբախիձեն:

Վրացական Sputnik-ի տվյալներով՝ կառավարությունը 2026 թվականի բյուջեով նախատեսում է ամբողջությամբ ավարտել Ռուսթավի-Կարմիր կամուրջ եւ Ալգետի-Սադախլո հատվածների շինարարությունը, որոնք տանում են դեպի Հայաստանի եւ Ադրբեջանի սահմաններ, ինչպես նաեւ Բաթումի-Սարպի ճանապարհի շինարարությունը, որը տանում է դեպի թուրքական սահման:

ՈՉ ՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ ԽԱՆԳԱՐԵԼ

Եթե Որոտանի հիդրոկասկադի 120 մլն վարկային ներդրումը, որն ընթացքի մեջ է, գումարենք TRIPP-ը՝ մոտ 200 մլն դոլար, գումարենք NVIDIA-ն, որը 500 եւ ավելի մլն դոլար է, գումարենք ատոմային էներգետիկան, ապա մեկ մլրդ դոլարի ներդրումային ծրագրեր կան, որոնք շատ շոշափելի են, մի մասը նույնիսկ ընթացքի մեջ են: Այս մասին, երեկ՝ փետրվարի 9-ին, ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը:

Դիտարկմանը, որ խոսվում է այն մասին, որ ԱՄՆ-ն հետաքրքրված է Հայաստանի հարավում ուրանի հանքերով, նախարարն ասաց. «Սա աննախադեպ է Հայաստանի պատմության մեջ: Նոր ներդրումային ծրագրեր հնարավո՞ր են: Իհարկե, ցանկալի են շատ եւ կուզենք տեսնել: Բայց ԱՄՆ փոխնախագահը կգա, բանակցությունները կլինեն: Այլ մանրամասներ, այդ թվում ձեր հարցադրման վերաբերյալ, ես չեմ տիրապետում»:

Ինչ վերաբերում է նրան, որ Թրամփը հրամանագիր է ստորագրել, որ կարող են մաքսատուրքեր սահմանել բոլոր այն երկրների նկատմամբ, որոնք առեւտուր կանեն Իրանի հետ, Պապոյանն ասաց, որ այդ հարցը եւս միանշանակ կքննարկվի Վենսի Երեւան այցելության ժամանակ. «Մոտավորապես 50 մլն դոլարի արտահանում ենք ունեցել նախորդ տարի ԱՄՆ-ի հետ եւ այդ ապրանքները իրենց մրցունակությունը կկորցնեն, եթե մաքսատուրքը 10-ից դառնա 25: Բայց, ես գոնե մամուլից եմ իմացել դրա մասին, էկոնոմիկայի նախարարությունը որեւէ բան չի ստացել ԱՄՆ-ի կողմից: Երկրորդը, կտեսնենք, թե իմպլեմենտացիան ոնց կլինի, բնականաբար, գործընկեր երկրների հետ քննարկումներ տեղի կունենան: Վենսի հետ բոլոր հարցերը կքննարկվեն: Ես ձեզ հավաստիացնում եմ, որ օրակարգում ավելի կարեւոր ու ավելի հետաքրքիր հարցեր կան: Դա էլ է կարեւոր, բայց ավելի կարեւոր հարցեր կան»:

Ինչ վերաբերում է խոսակցություններին, որ Հայաստանում ամերիկյան մոդելի մոդուլային ատոմակայան է կառուցվելու, Պապոյանն ասաց, որ տարբեր երկրների հետ քննարկումներ են ընթանում, այդ թվում ԱՄՆ-ի հետ. «Հայաստանը կընտրի այն տարբերակը, որն իր պետական շահերին ամենահամահունչն է լինելու»:

Հարցին՝ արդյոք Վենսի հետ կքննարկվի նաեւ հայ գերիների թեման, նախարարն արձագանքեց. «Ես կարծում եմ՝ բոլոր հարցերը, որոնք կարող են լինել հայ-ամերիկյան օրակարգում, կքննարկվեն»:

Անդրադառնալով TRIPP նախագծին, Պապոյանն ասաց. «TRIPP-ը արդեն գնացել է, այլեւս ոչ ոք չի կարող խանգարել TRIPP-ին»:

Դիտարկմանը, թե Ռուսաստանը կարո՞ղ է մասնակցություն ունենալ TRIPP-ում, նա ասաց. «TRIPP-ում երկու կողմ կա՝ ԱՄՆ եւ Հայաստան»:

Նա նաեւ հայտարարեց, որ Վենսի այցելության շրջանակներում հակահրանական հարց չկա:

ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿ ՃԱՆԱՉՎԵՑ

ՀԱՄԱԼԻՐ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ 4 ԱՆՁ ՍՊԱՆՈՂԻՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արամուսում 4 ժամվա մեջ 4 քաղաքացիների սպանություն կատարող Թադեւոս Հովակիմյանին կրկին փորձաքննության են ենթարկելու: Գործը հսկող դատախազը որոշել է բավարարել սպանվածների հարազատի փաստաբան Գոռ Ալոյանի բողոքը:

Արամուսում 4 ժամվա մեջ 4 քաղաքացիների սպանության դեպքից անցել է 4 ամիս, սակայն կրքերը համայնքում չեն հանդարտվել, եւ իրավապահ համակարգը դեռ Արամուսում հսկողություն է իրականացնում:

Հիշեցնենք, որ 2025 թվականի հոկտեմբերի 12-ին Կոտայքի մարզում Թադեւոս Հովակիմյանը 1 օրում 4 անձի սպանեց: Հոկտեմբերի 12-ին նա գնացել է Արամուս գյուղի դաշտ ու սպանել Արմենուհի եւ Գագարին Ղազարյաններին: 61-ամյա Թադեւոսը ամուսիններին սպանելուց հետո իր հանցավոր գործողությունները չէր դադարեցրել: Մինչ իրավապահ համակարգը դեպքի վայրում գործողություններ էր իրականացրել ու փորձում էր հասկանալ՝ ինչ է եղել, ենթադրյալ հանցագործը նույն օրը Կոտայքի մարզի Ջովաշեն գյուղի դաշտամիջյան ճանապարհին կրակոցներ էր արձակել Կոտայքի մարզի Ջովունի բնակավայրում հաշվառված 46-ամյա Վահե Մարտիրոսյանի եւ Երեւանում հաշվառված 44-ամյա Մարինե Հայրապետյանի ուղղությամբ: Վերջիններս տեղում մահացել էին:

Թադեւոս Հովակիմյանը, որն արդեն 15 տարի որսորդական միության անդամ է եւ վերջին տարիներին ունեցել է որսորդական հրացան, ՀՀ քննչական կոմիտեի կողմից պաշտոնապես անմեղսունակ է ճանաչվել, եւ նա կարող է խուսափել պատասխանատվությունից:

ArmLur.am-ը լրատվականը զրուցել էր Արամուսում սպանված Գեւորգ Ղազարյանի տուժողի ներկայացուցիչ Գոռ Ալոյանի հետ: Վերջինս պահանջում էր, որ սպանություն կատարողին կրկնակի փորձաքննության ենթարկեն, որպեսզի իրենց կասկածները ամրապնդվեն՝ արդյոք տղամարդը ունի առողջական խնդիրներ:

Արդյունքում փաստաբանի բողոքը բավարարվել է, եւ ՔՊ անդամ ներկայացած Թադեւոս Հովակիմյանին կրկնակի փորձաքննության կենթարկեն:

Ստացվում է, որ 4 անձի սպանած Թադեւոս Հովակիմյանը, որը անմեղսունակ էր ճանաչվել, կրկին բժիշկների կողմից կզննվի: Հետեւեւենք քննության ընթացքին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՋԻՆՎՈՐԻ ԱՉՔԵՐԸ ՎՆԱՍՎԵԼ ԵՆ

ArmLur.am-ի հետ զրույցում ՀՀ պաշտպանության նախարարության զորամասին հարակից տարածքից դաժան ծեծի ենթարկված 24-ամյա Ավետիք Մ.-ի հարազատները հայտնել են, որ միջադեպից անցել է մի քանի օր, եւ մինչ այս պահը չեն հայտնաբերել այն անձանց, որոնք դաժան ծեծի են ենթարկել իրենց զինվորին:

Հարազատները նշել են, որ ծեծի ենթարկված զինվորին դեռ չեն տեսել, բայց ասում են, որ աչքերն են լուրջ վնասված. «Մենք չենք տեսել երեխային, դեռ բան չգիտենք»: ՊՆ-ից հրաժարվեցին մեկնաբանել՝ նշելով, որ անձնական տվյալ է: Ավելին՝ չի բացառվում, որ դաժան ծեծի ենթարկված զինվորի աչքը հեռացնեն:

Փետրվարի 5-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 20:30-ի սահմաններում Նուբարաշեն վարչական շրջանում գտնվող ՀՀ պաշտպանության նախարարության զորամասին հարակից տարածքից դաժան ծեծի հետեւանքով ծայրահեղ ծանր վիճակում Մուրացանի զինվորական հոսպիտալ է տեղափոխվել մի քաղաքացի:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, զինվորական հոսպիտալ են մեկնել ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության Երեւանի կայազորի ծառայողները, որոնց բժիշկները հայտնել են, որ վիրավորը գտնվում է վիրահատարանում անգիտակից վիճակում եւ ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու:

Ռազմական ոստիկանության ծառայողները պարզել են, որ հոսպիտալ տեղափոխվածը ծառայում է Նուբարաշենի զորամասում որպես պայմանագրային զինծառայող, եւ նրան խմբակային դաժան ծեծի են ենթարկել: Ֆոտոլրագրողի տեղեկություններով, նա ծանր վնասվածք է ստացել նաեւ դեմքի, այդ թվում՝ աչքերի հատվածում, եւ նա Կոտայքի մարզի բնակիչ 24-ամյա Ավետիք Մ.-ն է:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ

Քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում հետախուզվողների վերաբերյալ ստացված օպերատիվ տվյալներն իրացվեցին Արմավիրի եւ Շիրակի մարզային վարչությունների ծառայողների հետ համատեղ: Հունվարի 30-ին՝ ժամը 12:30-ին, Արմավիրի մարզի Հացիկ գյուղում հայտնաբերվեցին եւ Արմավիրի մարզային վարչություն տեղափոխվեցին սպանության փորձի եւ հրազեն ապօրինի կրելու մեղադրանքներով հետախուզվող 25-ամյա եւ ծանր մարմնական վնաս պատճառելու մեղադրանքով հետախուզվող 33-ամյա երկու տղամարդիկ: Դեռեւս 2021 թ. դեկտեմբերի 6-ի գիշերը հեռախոսային վեճը շարունակելու նպատակով 33-ամյա հետախուզվողն այցելել էր Գյումրիի Մուշ թաղամասի բնակիչ մի տղամարդու տուն, որտեղ ինքն ու մեկ այլ անձ բռունցքներով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ էին հասցրել տանտիրոջը՝ անզգուշությամբ առաջացնելով նրա մահը: Իսկ սպանության փորձի մեղադրանքով հետախուզվողը անցած տարվա դեկտեմբերի 25-ին դարձյալ հեռախոսային վեճը շարունակելու համար, ժամը 23-ի սահմաններում իր հետ վիճողին հանդիպել է Գյումրիի Մուշ թաղամասում, եւ ունենալով զենքի գործադրմամբ նրան կյանքից զրկելու նպատակ՝ չորս անգամ կրակել է նրա վրա: Տուժողը, սակայն, տեղափոխվել է «Գյումրի» բժշկական կենտրոն, որտեղ հաջողվել է փրկել նրա կյանքը: Երկու հետախուզվողն էլ կալանավորվել եւ տեղափոխվել են քրեակատարողական հիմարկ:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 5-ին ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած քաղաքացին հայտնել է, որ փետրվարի 3-ի ժամը 13-ից փետրվարի 5-ի ժամը 9-ը ընկած ժամանակահատվածում կոտրել են Աբովյան փողոցի հասցեներից մեկի մոտ կայանված իր «Մերսեդեսի» դռան ապակին եւ սրահից գողացել լուսանկարահանող սարքեր եւ գործիքներ: Համայնքային ոստիկանության Կենտրոնական եւ Մարաշի բաժինների ծառայողները, իրացնելով Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժնի գործընկերների օպերատիվ տվյալները, համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում նույն օրը Մամիկոնյանց փողոցում հայտնաբերել, գողություն կատարելու կասկածանքով ձերբակալել եւ Կենտրոնական բաժին են տեղափոխել 45-ամյա մի տղամարդու: Նրա անձնական խուզարկությամբ գողացված լուսանկարահանող սարքերը հայտնաբերվել են: Կազմված փաստաթղթերը փոխանցվել են նախաքննական մարմին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ

Քրեական ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ծառայողները դեռեւս անցած տարվա նոյեմբերին ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Սեւան քաղաքի, Գագարին, Ծաղկունք եւ Լճաշեն գյուղերի բնակիչ մի խումբ տղամարդիկ ապօրինի պահում են զենք-զինամթերք եւ թմրամիջոցներ: Նոյեմբերի 15-ին նախաձեռնվեց քրեական վարույթ: Օպերատիվ-հետախուզական լայնածավալ միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում տեղեկությունն ի վերջո հաստատվեց, ճշտվեց կասկածելի անձանց շրջանակը: Փետրվարի 4-ին, դատարանի որոշմամբ Քննչական կոմիտեի ծառայողները, քրեական ոստիկանների եւ Համայնքային ոստիկանության Սեւանի բաժնի ծառայողների հետ համատեղ 11 անձանց բնակության վայրերում կատարեցին խուզարկություններ:

Սեւանի բնակիչ 34-ամյա տղամարդու տանը հայտնաբերվեցին նռնակ եւ փամփուշտներ, Սեւանի բնակիչ 29-ամյա տղամարդու տանը՝ թմբուկավոր ատրճանակ, դեղնականաչավուն զանգված եւ կանեփի սերմ, Ծաղկունքի բնակիչ 52-ամյա տղամարդու տանը՝ կանեփի 22 ցողուն՝ մոտ երկու կիլոգրամ քաշով, կանեփի սերմ, 620 գրամ կանեփի նմանվող զանգված, նաեւ՝ ավելի քան 11 կիլոգրամ չորացված-մանրացված զանգվածներով լցված 32 տարա, իսկ Լճաշենի բնակիչ 49-ամյա տղամարդու տանը հայտնաբերվեց մոտ 288 գրամ մանրացված կանեփանման զանգված: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՀԱՆՑԱՎՈՐ ԽՈՒՄԲ

ՆԳՆ Քրեական ոստիկանության գլխավոր եւ Լոռու մարզային վարչությունների ծառայողները համատեղ ձեռնարկած ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ մի խումբ անձինք, ստեղծելով հանցավոր խումբ եւ ձեռք բերելով ապօրինի զենք-զինամթերք, նախապատրաստել են սպանություններ, կատարել ավազակային հարձակում եւ բնակարանային գողություններ: Միջամտելով տարբեր անձանց միջանձնային ու ֆինանսական խնդիրներին՝ դիմել են, այսպես կոչված, քրեական հեղինակության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց, ինչպես նաեւ մասնակցել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներին ու գործողություններին: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Հանցավոր խմբի անդամներին մեղադրանքներ են առաջադրվել սպանության նախապատրաստության, սպանության փորձի, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու, ապօրինի զենք-զինամթերք կրելու, խուլիգանության, ավազակության, գողության, գույք ոչնչացնելու կամ վնասելու եւ թմրամիջոցներ իրացնելու հատկանիշներով: Ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հանցավոր խմբի անդամները հայտնաբերվել եւ ձերբակալվել են:

Քննչական կոմիտեի ծառայողների հետ համատեղ կատարված խոշորամասշտաբ խուզարկություններով նրանց բնակության վայրերում հայտնաբերվել են ապօրինի զենք-զինամթերք եւ թմրամիջոցներ: Հանցավոր խմբի 10 անդամների նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

● *Փետրվարի 2-ից 8-ը ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում գրանցվել է 530 դեպք, որից 145-ը՝ արտակարգ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԵՏԲՅՈՒՋԵԻՑ ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ կատարել, թե 2025թ. պետական բյուջեից որքան պարգեւավճար են ստացել Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնյաները, պետբյուջեից որքան դրամական աջակցություն են ստացել Տավուշի մարզի սոցիալապես անապահով բնակիչները: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսվել է 67 մլն 547 հազ. դրամ ֆինանսական միջոցներ: Մարզպետի աշխատակազմում դրամական օգնության համար ստացվել է 1581 դիմում: Պետական բյուջեով նախատեսված դրամական միջոցները ամբողջությամբ ծախսվել է: Գումարների վճարումը կատարվել է կանխիկ՝ բանկային համակարգի միջոցով: 2025 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 65 միլիոն 893 հազար 600 դրամ պարգեւավճար»:

Հունվարի 29-ին մարզպետին նոր հարցում եմ արել՝ 2026թ. պետբյուջեով որքան գումար է նախատեսված Տավուշի մարզպետի աշխատակազմին պարգեւատրելու, որքան գումար՝ Տավուշի մարզի սոցիալապես անապահով բնակիչների դրամական աջակցության համար: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ 2026թ. պետական բյուջեով աշխատակազմի համար նախատեսվել է պարգեւատրման ֆոնդ՝ 65.883.4 հազար եւ սոցիալական աջակցության համար՝ 59.883.8 հազար ՀՀ դրամ»:

Ի՞նչ է ստացվում, Տավուշի մարզպետն ու մարզպետարանի 66 աշխատակիցները, ովքեր համեմատաբար բարձր աշխատավարձ են ստանում, այս տարի պետական բյուջեից կստանան 6 միլիոն դրամով ավելի պարգեւավճար, քան ամբողջ Տավուշի մարզի սոցիալապես անապահով բնակիչները՝ պետական բյուջեից դրամական աջակցություն:

ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՉԻ ՀԱՄՆՈՒՄ

Երեւանի սուպերմարկետներում մեկ լիտր կաթի գինը 600-700 դրամ է: Ամառանը Բերդի համայնքի սարերում գտնվող ամառանոցների անասնապահներից սարերի մարգագետինների խոտով սնվող կովերի անարատ կաթը մեծաքանակ գնորդները, հավաքողները գնում էին լիտրը 140 դրամով: Տավուշի գյուղերի կովերի կաթը վերամշակող ձեռնարկությունների կողմից չի հավաքվում, արտադրանք չի դառնում, չի հասնում Երեւանի եւ այլ քաղաքների սպառողներին: Քաղաքաբնակ սպառողները հաճախ կասկածելի ծագումով, թանկ կաթ են գնում: Արդյունքում դժգոհ են մնում եւ անասնապահները, եւ քաղաքների սպառողները: Գյուղատնտեսական երկիր Հայաստանում գյուղնախարարությունը վերացրել են, իսկ էկոնոմիկայի նախարարության կազմում առկա գյուղատնտեսական մի քանի վարչություններն անարդյունավետ են, գյուղացիների դարդերին դարման չեն անում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՄՅԱՆԻ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՔՊ-ԱԿԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆԻ ՔԱՐՈԶԸ

«Հակոբ Կոնջորյան» կրթահամալիրի տնօրեն Ռուզաննա Երեմյանը, անտեսելով իր ծառայողական պարտականությունները, աշխատանքային ժամին զբաղվում է բացահայտ կուսակցական քարոզչությամբ:

Մինչ կրթահամալիրում ընթանում է դասապրոցեսը, տնօրենը սոցիալական ցանցերում զբաղված է քաղաքական ինքնագովազդով՝ իր ֆեյսբուքյան էջում հայտարարելով, որ ընդգրկվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների համամասնական ցուցակում:

««Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության սիրելի ընկերներ, թիմակիցներ, պատվիրակներ, ինչպես գիտեք, կուսակցության վարչության որոշմամբ ես նույնպես ընդգրկվել եմ 2026 թվականի խորհրդարանական հերթական ընտրությունների համամասնական ցուցակում: Քաղաքական թիմի սիրելի ընկերներ, պատվիրակներ, հաշված օրեր են մնացել, որպեսզի դուք որոշում կայացնեք: Ազգային ժողովի առաջիկա ընտրություններում հավակնում եմ ձեր աջակցությանը»,- գրել է Երեմյանը:

Փաստորեն, պետական կրթական հաստատության ղեկավարը, մոռանալով իր պաշտոնական առաքելության մասին, ամբողջությամբ «լծվել» է մեկ նպատակի՝ ամեն գնով մանդատ ձեռք բերելուն:

Ավելին, Երեմյանը վերջին շրջանում աչքի է ընկնում իշխանությանը հաճոյանալու մոլուցքով. նա ակտիվորեն մասնակցում է Նիկոլ Փաշինյանի հետ պատարագներին, պարբերաբար սուր եւ վիրավորական հարձակումներ է գործում ընդդիմադիրների նկատմամբ, իսկ իշխանության ցանկացած քննադատի դիտարկում է որպես «թշնամի»:

Հիշեցնենք, որ Ռուզաննա Երեմյանը առաջին անգամ չէ, որ հայտնվում է սկանդալների կիզակետում: Նրա կողմից քաղաքական եւ կրոնական քարոզչություն իրականացնելու, ինչպես նաեւ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը կոպտորեն խախտելու վերաբերյալ բազմաթիվ բողոքներ են ուղղվել ԿԳՄՍ նախարարությանը, սակայն վերջինս մինչ օրս որեւէ արդյունավետ արձագանք չի տվել:

Ստացվում է, որ պետական կրթական համակարգը վերածվել է կուսակցական սպասարկման հարթակի, իսկ օրենքի խախտումները՝ անպատժելիության հերթական դրսեւորման:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱԶԱՏ ԵՆ ԱՐՁԱԿՎԵԼ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Վենեսուելայի ընդդիմադիր քաղաքական գործիչներ Խուան Պաբլո Գուանիպան եւ Ֆրեդի Սուպերլանոն, ինչպես նաեւ հայտնի փաստաբան Պերկինս Ռոչան, փետրվարի 8-ին ազատ են արձակվել բանտից: Այս մասին հայտարարել են նրանց ընտանիքները եւ իրավապաշտպան կազմակերպությունները:

«Ֆորո Պենալ» իրավապաշտպան խումբը հայտարարել է, որ փետրվարի 8-ին ընդհանուր առմամբ մոտ 35 քաղբանտարկյալ է ազատ արձակվել:

Կազմակերպությունը նախկինում հաստատել էր, որ Վենեսուելայի կառավարության կողմից հունվարի 8-ից ի վեր ազատ է արձակվել է 383 քաղբանտարկյալ:

Գուանիպան, Ռոչան եւ Սուպերլանոն Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիր եւ ընդդիմության առաջնորդ Մարիա Կորինա Մաչադոյի մտերիմ դաշնակիցներն են:

«Վենտե Վենեսուելա» ընդդիմադիր շարժման փաստաբան Ռոչան ձերբակալվել էր 2024 թվականի օգոստոսին՝ ահաբեկչության եւ դրան առնչվող մեղադրանքներով: Գուանիպան ամիսներ շարունակ թաքնվելուց հետո ձերբակալվել էր 2025-ի մայիսին՝ ահաբեկչական դավադրություն կազմակերպելու մեղադրանքով:

Ընդդիմադիր մեկ այլ կուսակցության առաջնորդ Ֆրեդի Սուպերլանոն ձերբակալվել էր 2024 թվականի նախագահական ընտրություններից հետո:

Երեք տղամարդիկ էլ հերքել են իրենց դեմ առաջադրված բոլոր մեղադրանքները:

Վենեսուելայի ընդդիմությունը եւ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող խմբերը տարիներ շարունակ հայտարարել են, որ երկրի սոցիալիստական կառավարությունը կալանավորումներն օգտագործում է այլախոհությունը ճնշելու համար:

Կառավարությունը հերքում է քաղբանտարկյալների առկայությունը երկրում՝ նշելով, որ բոլոր բանտարկյալները հանցանքներ են կատարել:

Բանտարկյալների ազատ արձակումները Վենեսուելայում սկսվել են այն բանից հետո, ինչ գործող նախագահ Նիկոլաս Մադուրոն ձերբակալվեց ամերիկյան ուժայինների կողմից:

ԼԱՎՐՈՎԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հեռախոսազրույց է ունեցել Օմանի արտաքին գործերի նախարար Բադր ալ-Բուսայիդիի հետ: Այս մասին հայտնում է Ռուսաստանի ԱԳ նախարարությունը:

ԱԳ նախարարները մտքեր են փոխանակել Իրանի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ՝ Օմանի միջնորդությամբ Մասկատում Իրանի եւ ԱՄՆ ներկայացուցիչների միջեւ վերջերս կայացած անուղղակի բանակցությունների համատեքստում:

«Համատեղ կարծիք է արտահայտվել բանակցային գործընթացի շարունակությունը խթանելու անհրաժեշտության մասին՝ փոխադարձաբար ընդունելի համաձայնություններ գտնելու նպատակով, որոնք կնպաստեն զինված բախման ռիսկի վերացմանը եւ տարածաշրջանում կայունության ապահովմանը»,- նշվել է հաղորդագրության մեջ:

Սերգեյ Լավրովը բարձր է գնահատել Օմանի Սուլթանության ղեկավարության ջանքերն այս հարցում:

Իրանի-ԱՄՆ բանակցություններն Օմանի միջնորդությամբ տեղի էին ունեցել Մասկատում փետրվարի 6-ին:

800 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ

Լիտվան մտադիր է 10 տարվա ընթացքում ավելի քան 800 միլիոն եվրո ծախսել հակատանկային ականների եւ ականապատման այլ համակարգերի ձեռքբերման համար: Այս մասին լրագրողներին հայտնել է մերձբալթյան հանրապետության պաշտպանության նախարար Ռոբերտաս Կաունասը:

«Որպեսզի մինչեւ 2035 թվականը 812 միլիոն եվրոյի ականների գինանոց ձեռք բերելու մեր քաղաքական որոշումը փոխադրվի գործնական հարթություն, մենք բանակցություններ ենք վարում Ուկրաինայի եւ Լեհաստանի հետ՝ այդ զինամթերքի արտադրության եւ գնման հարցով»,- ասել է նա:

Նախարարի խոսքով՝ հակատանկային ականներով զինման ժամանակացույցը նախատեսում է մինչեւ 2029 թվականը գնել 10 տարվա համար հաշվարկված ողջ քանակի 60%-ը: «Դա պետք է կազմի 170 հազար ական»,- հստակեցրել է Կաունասը:

Վիլնյուսը նախատեսված ծախսերը կծածկի միայն մասնակիորեն: Ինչպես նշել է պաշտպանական գերատեսչության ղեկավարը, 189 միլիոն եվրոն կհատկացվի SAFE (Security Action for Europe) հիմնադրամի միջոցներից:

● *Նախորդ շաբաթվա ընթացքում տուժել է 78, զոհվել՝5 մարդ: Փրկարարական գործողությունների արդյունքում փրկվել է 1 մարդ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՆՑԱԿԵՏԻ ԲԱՑՈՒՄԸ

Իգդիրի նահանգապետ Ֆըրաթ Թաշոլարը ծանոթացել է Հայաստանի հետ սահմանի «Ալիջան» սահմանային անցակետում իրականացվող վերանորոգման եւ ենթակառուցվածքային աշխատանքներին եւ տեղեկություններ ստացել գործընթացի մասին:

Այս մասին հայտնում է «Yesiligdir»-ը:

Նահանգապետ Թաշոլարը տեխնիկական խմբի ուղեկցությամբ զննել է սահմանային գծի երկայնքով գտնվող շենքերն ու անցման ուղիները:

Ստուգայցի ընթացքում նահանգապետն ընդգծել է, որ աշխատանքները նախատեսվում է ավարտել կարճ ժամանակում:

Ընդգծվել է, որ սահմանային անցակետի ակտիվացմամբ հետապնդվում են հետեւյալ նպատակները.

- Սահմանային առեւտրի վերակենդանացում. Իգդիրում եւ հարակից նահանգներում առեւտրային ակտիվության աճ:
- Լոգիստիկ առավելություն. Կովկասով տրանսպորտի համար ավելի կարճ երթուղիներ:
- Զբոսաշրջային շարժունակություն. երկու երկրների միջեւ փոխադարձ այցելություններ, որոնք նպաստում են տարածաշրջանային զբոսաշրջությանը:

«ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼՐՋՈՒԹՅՈՒՆ»

Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին հայտարարել է, որ ԱՄՆ-ի հետ անուղղակի բանակցությունները կշարունակվեն, եթե Թեհրանը գա եզրահանգման, որ Վաշինգտոնը լրջությամբ է մոտենում Իրանի միջուկային խնդրի բանակցային լուծմանը: Այս մասին Արաղչին ասել է փետրվարի 8-ին Թեհրանում կայացած մամուլի ասուլիսում: Նրա խոսքով՝ բանակցություններ-ի հաջողությունը կախված է նրանից՝ արդյոք մյուս կողմն այս հարցին «անհրաժեշտ լրջությամբ» կվերաբերվի:

«Կարծում եմ՝ բանակցությունների առաջին փուլն ավելի շատ նման էր վստահության եւ բանակցությունների միջոցով համաձայնության հասնելու լրջության ստուգման: Կան նշաններ, որոնք վկայում են, որ ԱՄՆ-ն որոշակի լրջություն ունի, բայց կան նաեւ որոշ նշաններ, որ այդ լրջությունը թուլանում է, ինչպիսիք են որոշակի պատժամիջոցների շարունակությունը եւ ռազմական որոշ ակտիվությունը: Այս ամենը կասկածներ է առաջացնում այն մասին, թե արդյոք մյուս կողմը լուրջ է վերաբերվում եւ պատրաստ է արդյոք իրական բանակցությունների: Մենք ուշադիր հետեւում ենք եւ գնահատում այս բոլոր նշանները՝որոշելու համար՝արդյոք շարունակել բանակցությունները, թե ոչ», - Արաղչիի խոսքերն է մեջբերում Reuters գործակալությունը: Նա հավելել է, որ ԱՄՆ-ի անիրատեսական եւ անխոհեմ պահանջներն իրական խոչընդոտ են ներկայացնում: Արաղչին եւս մեկ անգամ կրկնել է, որ Իրանը միջուկային զենք ստեղծելու որեւէ մտադրություն չունի:

Մասկատում փետրվարի 6-ին տեղի են ունեցել Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ անուղղակի բանակցություններ՝ Օմանի միջնորդությամբ: Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը հայտարարել է, որ այդ բանակցությունները քայլ էին դեպի առաջ:

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԱՎԱՐՏԵԼ Է

Հայէկոնոմբանկը ժամկետից շուտ ավարտել է 3 մլրդ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերի հերթական տրանշի տեղաբաշխման գործընթացը:

Պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը 10.5% է, արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային, շրջանառության ժամկետը՝36 ամիս, իսկ պարտատոմսերի մարման ամսաթիվը՝30.09.2028թ.:

Պարտատոմսերը ներկայացվելու են ցուցակման Հայաստանի ֆոնդային բորսայում եւ գնանշվելու են շուկա ստեղծողի (Marketmaker) կողմից:

Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը եւ մարումն իրականացվելու է հետեւյալ ժամանակացույցով՝

1-ին վճարում – 30.03.2026 թ.
2-րդ վճարում – 30.09.2026 թ.
3-րդ վճարում – 30.03.2027 թ.
4-րդ վճարում – 30.09.2027 թ.
5-րդ վճարում – 30.03.2028 թ.
6-րդ վճարում եւ անվանական արժեքի մարում – 30.09.2028 թ.

Պարտատոմսերի մանրամասներին կարող եք ծանոթանալ ազդագրում:

Հիշեցնենք, որ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորվում են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՀՐԱՏԱՊ ԿՈՉ

ԳԱՐԵԳԻՆ Բ–Ն ՊԵՏՔ Է ՀՐԱՎԻՐՎԻ ԱԺ

Հայ առաքելական եկեղեցու բարեռորոգման խորհուրդը հանդես է եկել հրատապ կոչով՝ ուղղված ՀՀ Ազգային Ժողովին:

Այն ներկայացնում ենք ստորեւ.

«ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀՐԱՏԱՊ ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Միայն մեկ շաբաթ է մնացել Ավստրիայում գումարվելիք Եպիսկոպոսաց ժողովին:

Օտարության մեջ անցկացվող հակաավանդական եւ ապազգային նախաձեռնության մասին ս.թ. հունվարի 21-ին համապատասխան գրություն հրապարակվեց Հայ եկեղեցու բարեկարգման համակարգող խորհրդի կողմից, որտեղ բոլոր եպիսկոպոսներին կոչ էր արվում չմասնակցել նման արկածախնդրության: Չնայած դրան եւ հակառակ բոլոր մնացած հանրային հարցազրույցներին եւ մասնագիտական բացատրություններին, Սբ. Գրիգոր Լուսավորչի հայրապետական գահը զբաղեցրած անձն ու նրա շուրջ հավաքված հակապետական խմբակը շարունակեցին պնդել, որ ժողովը միեւնույն է տեղի կունենա, եւ այնտեղ կքննվեն այն եպիսկոպոսների հարցերը, որոնք բացակա են լինելու: Անգամ բավարար քվորում չապահովելու դեպքում նրանք պատրաստ են դա անցկացնել առցանց եղանակով:

Այդ մասին հայտարարում են իրենց կիսագրագետ մունետիկները արհեստական բանականության օժանդակությամբ գրված հորդորներով եւ «վերլուծություններով»:

Ուստի ներեկեղեցական պառակտումից, Սբ. Գեղարդի պես մասունքների գողությունից, Հայ առաքելական սուրբ եկեղեցու պաշտոնական անվանումը փոփոխելուց եւ այլ տեսակի ազգային խայտառակություններից խուսափելու համար հարկավոր է շատ շտապ լուծում գտնել:

Քանի որ առաջիկա Եպիսկոպոսաց ժողովում պատժիչ գործողություններ են կիրառվելու արդարամիտ եւ բարեկարգության կողմնակից հոգեւորականների հանդեպ, հարկ է բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանել նրանց: Միայն այն խոսույթը, որ «մենք չենք ընդունում Կտրիճ Ներսիսյանին եւ նրա կարգալուծության տնօրինությունը վավերական չէ» ցավոք, չի կարող օգնել, որովհետեւ այդ սրբազաններն ապագայում չեն կարենալու մասնակցել Եպիսկոպոսաց կամ Ազգային եկեղեցական ժողովներին, ուստի «պատժվելուց» հետո նրանք ո՛չ առաջադրվելու են, ո՛չ էլ քվեարկելու գալիք տեղապահական կամ կաթողիկոսական ընտրություններին:

Ո՞րն է հնարավոր լուծումը. քանի որ բոլոր կանոնական կարգավորման ճանապարհներն ամբողջությամբ խափանված են, իսկ քաղհասարակության եւ հավատացյալ դասի ձայնը բնավ չի լսվում եկեղեցու վերնախավում, ապա մնում է միայն մեկ տարբերակ՝դատահիրավական անհապաղ միջամտություն: Դա պետք է արվի ոչ թե նրա համար, որ երկրի արդարադատության համակարգը ցանկանում է միջամտել եկեղեցու գործերին, այլ որովհետեւ ուրիշ տարբերակ չի մնում լուծելու տվյալ ճգնաժամը եւ խուսափելու հասարակական պառակտումից ու ընդհարումներից:

Եթե նկատի ենք առնում այն հանգամանքը, որ թե՛ իշխանության եւ թե՛ ընդիմության ներկայացուցիչները Հայ առաքելական սուրբ եկեղեցին ազգային ինքության կերտման եւ պահպանման համար ամենակարեւոր ինստիտուտներից մեկն են համարում, ապա այս հարցը պետք է շուտափույթ կերպով քննարկման առնվի Ազգային Ժողովի առաջիկա նիստերից մեկում: Բոլոր քաղաքակիրթ երկրներում նման խայտառակությունների պարագայում տվյալ ինստիտուտի ղեկավարը հրաժարական է տալիս, քանի որ նա է համարվում ուղղակի պատասխանատուն: Ուստի մեր պատգամավորները եւս պետք է Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնը զբաղեցնող անձին հրավիրեն Ազգային Ժողով եւ նույն հարցը տան, թե ինչպես է նա այս ճգնաժամային իրավիճակում, որն իր սխալ կառավարման արդյունքն է, շարունակում իրեն եկեղեցու գլուխ համարել: Թող ինքն արձագանքի բարձրացված հարցերին եւ առաջարկի հնարավոր ելքեր, որոնք հարիր կլինեն ազգային եկեղեցի համարվող ինստիտուտին: Այդպես են վարվում, օրինակ, շատ ավելի փոքր խնդիրների դեպքում երկրի գլխավոր դատախազը, ներքին գործոց կամ պաշտպանության նախարարները եւ այլք:

Իսկ եթե նա չներկայանա այդ նիստին, ուրեմն պատգամավորները պետք է ստեղծեն համապատասխան հանձնաժողով, որը կզբաղվի Կտրիճ Ներսիսյանի եւ նրա ապազգային կլանի դատահիրավական գործընթացի մեկնարկով եւ միեւնույն ժամանակ հրավիրյալ հոգեւորականների ու այլ մասնագետների օգնությամբ կմիջնորդի մեր հազարամյա եկեղեցու ժամանակավոր ղեկավարումն ու առաջիկա տեղապահական ընտրությունների կազմակերպումը եպիսկոպոսաց դասից արդար եղանակով ընտրված թեկնածուի առաջնորդությամբ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԵՐՋԱՆԻԿ ԱԲԳԱՐՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Երջանիկ Ավետիսի Աբգարյանը ծնվել է 1940 թվականի փետրվարի 8-ին Աբտարակի շրջանի Արգել գյուղում: Հայրը՝ Ավետիք Աբգարյանը, զոհվել է Երկրորդ համաշխարհային պատերազմում՝ 1943 թվականին, «Մալայա Զեմլյայում»: 1958-1963 թվականներին որպես խառատ աշխատել է Երևանի կաբելի եւ սարքաշինության գործարաններում: 1963-1968 թվականներին սովորել եւ ավարտել է Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի արաբագիտական բաժինը:



Օրեր առաջ լույս է տեսել նրա հոդվածների եւ հարցազրույցների ժողովածուն, որտեղ մեկ ամբողջության մեջ ամփոփված են նրա մտքերն ու գնահատականները Հայաստանի նորագույն պատմության ամենաբարդ ու վճռորոշ փուլերի վերաբերյալ:

Ժողովածուն ներառում է 1990-2019 թվականներին հայաստանյան եւ օտարերկրյա տարբեր լրատվամիջոցներում հրապարակված նյութեր, որոնք անդրադառնում են ինչպես Հայաստանի ներքին հասարակական-քաղաքական գործընթացներին, այնպես էլ երկրի շուրջ ծավալվող տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական զարգացումներին: Այս հրապարակումներում Երջանիկ Աբգարյանը հանդես է գալիս ոչ միայն որպես քաղաքական գործիչ, այլեւ որպես խորատես վերլուծաբան՝ փորձելով պարզ ու հասկանալի լեզվով բացատրել այն, ինչ հաճախ մնում է քաղաքական իրադարձությունների արտաքին շերտից անդին:

Գրքի ծանոթագրությունները կազմել, ընտանիքի արխիվում պահպանված նյութերը հավաքագրել եւ հրատարակության է ներկայացրել նրա դուստրը՝ իրավաբան Իզաբել Աբգարյանը: Հրատարակության նախապատրաստական եւ խմբագրական աշխատանքները տեւել են շուրջ հինգ տարի: Թեպետ այն նախապես նախատեսված էր լույս ընծայել Ե. Աբգարյանի 85-ամյակի կապակցությամբ, վերջնական տարբերակը տպագրվել է 2026 թվականի փետրվարի սկզբին:

Ժողովածուն շահույթ չի հետապնդում: Այն կրում է հիշողության եւ ժառանգության պահպանման առաքելություն՝ նպատակ ունենալով ընտանիքի կողմից ամփոփել ու հանրությանը, համախոհներին եւ գալիք սերունդներին փոխանցել անվանի գործչի գաղափարներն ու տեսակետները:

Հոդվածներում եւ հարցազրույցներում անդրադարձ կա հայ ժողովրդի առջեւ ծառացած կենսական խնդիրներին, պետականության կայացման մարտահրավերներին, Հարավային Կովկասում տարբեր աշխարհաքաղաքական կենտրոնների շահերի բախմանը, ինչպես նաեւ դրանց հնարավոր հետեւանքներին կարճաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարում: Երջանիկ Աբգարյանի գնահատականների եւ կանխատեսումների մեծ մասը դիմացել է ժամանակի քննությանը՝ ժողովածուն դարձնելով կարեւոր սկզբնաղբյուր նորագույն պատմության ուսումնասիրման համար:

Գիրքը միաժամանակ հիշողության վերականգնում է. այն օգնում է վերհիշել ոչ վաղ անցյալի բազմաթիվ դրվագներ, որոնք արդեն մոռացության են մատնվել, սակայն իրենց ազդեցությունն են թողել հետագա զարգացումների վրա: Աբգարյանի սուր դիտարկումները եւ իրադարձությունները կանխազգալու կարողությունը թույլ են տվել ժամանակին մատնանշել վերահաս վտանգները եւ առաջարկել հնարավոր ելքեր՝ նվազագույն կորուստներով:

Ե. Աբգարյանը կյանքից հեռացել է 2020թ. մայիսին 80 տարեկանում: 1988 թվականից մինչեւ կյանքի վերջը նա զբաղվել է ակտիվ հասարակական-քաղաքական գործունեությամբ, հեղինակել մենագրություններ եւ բազմաթիվ հոդվածներ՝ թողնելով մտավոր ժառանգություն, որն այսօր առավել քան արդիական է:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՐՑՈՒՂՈՒՑ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

25-րդ ձմեռային օլիմպիական խաղերի մասնակից, 2010թ. օլիմպիական չեմպիոն, աշխարհի կրկնակի չեմպիոն, 41-ամյա ամերիկացի լեռնադահուկորդուհի Լինդսի Վոնն ընկել է մեկնարկից 13 վայրկյան անց եւ ուղղաթիռով հոսպիտալացվել է, հաղորդում է BBC-ն: Նա մասնակցում էր լեռնադահուկային սպորտի արագընթաց վայրէջքի օլիմպիական մրցումներին: Ընկնելուց հետո Լինդսի Վոնը չի կարողացել ինքնուրույն քայլել: Լինդսի Վոնը 2019 թվականին ծանր վնասվածքից հետո հայտարարել էր կարիերան ավարտելու մասին: 2024-ին Լինդսի Վոնը ծնկահոդի փոխարինման հաջող վիրահատություն էր տարել եւ վերադարձել պրոֆեսիոնալ սպորտ: Անցած ամիս Լինդսի Վոնը ծնկի խաչաձեւ կապանի պատռվածք էր ստացել, բայց չէր հրաժարվել օլիմպիական մեկնարկից 2026թ. Միլանի եւ Կորտինայի Խաղերում:

ԵԹԵ ՀԵՌԱՆԱ

Մադրիդի «Ռեալի» եւ Գերմանիայի հավաքականի նախկին կիսապաշտպան Տոնի Կրոսը սեփական պոդքասթում անդրադարձել է Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի» պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի շուրջ ստեղծված իրավիճակին: «Սաուդյան լիգան զվարճալի վայր է, քանի որ մինչեւ Ռոնալդուի տեղափոխությունը ոչ ոք դրա մասին չէր լսել, իսկ հիմա նրանք չեն հարգում մի խաղացողի, որը համաշխարհային ճանաչում է բերել լիգային: Ուղիղ կասեմ՝ եթե Ռոնալդուն վաղը հեռանա Սաուդյան Արաբիայից, այլեւս ոչ ոք չի դիտի այդ լիգայի խաղերը»,- ասել է Տոնի Կրոսը: Ռոնալդուն դժգոհ է Սաուդյան Արաբիայի ներդրումային հիմնադրամի քաղաքականությունից: Այդ հիմնադրամին են պատկանում «Ալ Նասր», «Ալ Իթիհադ», «Ալ Հիլալ», «Ալ Ահլի» ակումբները: Ռոնալդուն բոյկոտել է «Ալ Նասրի» նախորդ երկու հանդիպումները:

ԿԱՐՈՂ Է ԳԵՐԱԶԱՆՑԵԼ

«Ռեալի» գլխավոր մարզիչ Ալվարո Արբելոան հայտարարել է, որ Կիլիան Մբապեն կարող է կրկնել եւ անգամ գերազանցել Կրիշտիանու Ռոնալդուի ռեկորդները: Լա Լիգայի 23-րդ տուրի շրջանակում «արքայական ակումբը» հյուրընկալվելիս 2:0 հաշվով վստահ հաղթանակ է տարել «Վալենսիայի» նկատմամբ, որտեղ գոլերից մեկը հեղինակել է Մբապեն: Ֆրանսիացի հարձակվողն այժմ միանձնյա գլխավորում է Իսպանիայի առաջնության ռմբարկուների աղյուսակը՝ իր ակտիվում ունենալով 23 գոլ: Նա մոտակա հետապնդողին գերազանցում է 8 գնդակով: «Մեզ շատ է բախտ վիճակվել, քանի որ հենց այս պահին նա աշխարհի լավագույն ֆուտբոլիստն է եւ ապացուցում է դա ամեն օր՝ խաղից խաղ: Ինչպես նախկինում նշել եմ, Կրիշտիանուի նվաճումները թվում էին անիրական, անգերազանցելի մի բան, որին ոչ ոք չի կարող հասնել: Մբապեն դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, քանի որ Կրիշտիանուն այստեղ հանդես է եկել երկար տարիներ, սակայն Կիլիանն ունի բոլոր նախադրյալները՝ նրա հետքերով գնալու համար», -Արբելոայի խոսքերն է մեջբերում «Ռեալի» մամուլի ծառայությունը:

ԼՈՒՐԵՐ

ԴՊՐՈՑԸ ՝ՀՐԱՆՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

Արթիկ խոշորացված համայնքի ավագանու որոշմամբ Արթիկի գեղարվեստի դպրոցն անվանվել է ՀՀ վաստակավոր եւ ժողովրդական նկարիչ, Ս.Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի պատվավոր անդամ, Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի պրոֆեսոր Հրանտ Թադեւոսյանի անունով:

Այս մասին հաղորդագրություն է տարածել Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի մամուլի խոսնակ Ժասմեն Վիլյանը:

«Հաճելի է, երբ նման պատվի են արժանացնում կենդանության օրոք, ինչը նաեւ շատ պարտավորեցնող է այն իմաստով, որ իմ կապն այս դպրոցի հետ էլ ավելի կսերտանա՝ վերածվելով լավ բարեկամության: Կկազմակերպվեն վարպետաց դասեր, ցուցահանդեսներ, կփորձեմ իմ փորձը փոխանցել ապագա գեղանկարիչներին: Այս պատվավոր իրողության համար շնորհակալություն եմ հայտնում իմ գործնկերներին, որոնք դպրոցի անվանակոչման հարցում առաջադրել են իմ թեկնածությունը»,- ասել է Թադեւոսյանը:

«Դպրոցի անվանակոչությունը հարգանքի եւ երախտիքի խոսք է Վարպետի ստեղծագործական ուղուն եւ կարեւոր գործոն է համայնքի մշակութային կյանքի կայացման ճանապարհին»,- ասել է Արթիկ խոշորացված համայնքի ղեկավար Անան Ոսկանյանը:

Գույնի եւ բնության միջոցով մարդու ներաշխարհը բացահայտելու մեծ վարպետ Հրանտ Թադեւոսյանի ավանդը չի սահմանափակվում միայն իր մեծածավալ ստեղծագործական արժեքով. անգնահատելի է նրա դերը երիտասարդ սերնդին իր փորձը փոխանցելու եւ կրթելու գործում, ինչը վարպետը նվիրումով տասնյակ տարիներ իրականացնում է ՃՇՀԱՀ-ում:

«Այս անվանակոչությամբ մենք հաստատում ենք մի կարեւոր սկզբունք. կրթական եւ մշակութային համակարգը պետք է կարողանա գնահատել իրական վաստակը ժամանակին: Սա ուղերձ է թե՛ ուսուցիչներին, թեաշակերտներին, որ ազնիվ աշխատանքը, հետեւողականությունն ու մասնագիտական նվիրվածությունը տեսանելի են եւ գնահատված»,- ասել է ՃՇՀԱՀ-ի ռեկտոր Մանուկ Բարսեղյանը:

Հրանտ Թադեւոսյանի անվան դպրոցի տնօրեն Արա Մերգելյանը նշել է, որ իրենց դպրոցից են ստեղծագործական ուղին սկսել բազմաթիվ անվանի արվեստագետներ, որոնք տարիներ շարունակ ոչ միայն դասավանդել են դպրոցում, այլեւ այսօր էլ շարունակում են աջակցել, սատարել դպրոցին: «Դպրոցն անվանակոչելով Հրանտ Թադեւոսյանի անունով՝ վստահ ենք, որ այսուհետ առավել կամրապնդվի արվեստագետների համախմբվածությունն ու համագործակցությունը դպրոցի հետ, ինչը կնպաստի կրթական մակարդակի շարունակական բարձրացմանը եւ նոր ստեղծագործական հաջողություններին»,- ասել է Մերգելյանը:

ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆԻ ԵՎ ԲՐԵԴ ՓԻԹԻ ՖԻԼՄԻ ԹԻԶԵՐԸ

Ամերիկահայ դերասան Կարեն Կարագուլյանի մասնակցությամբ «The Adventures of Cliff Booth» («Քլիֆ Բութի արկածները») ֆիլմի թիզերն արդեն համացանցում է: 2026 թ. էկրաններ բարձրացող ֆիլմի ռեժիսորը Դեւիդ Ֆինչերն է, իսկ սցենարի հեղինակը՝ Քվենտին Տարանտինոն:

Ֆիլմը, որի գլխավոր դերում հայտնի դերասան Բրեդ Փիթն է, պատմում է իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունենում Տարանտինոյի «Մի անգամ Հոլիվուդում» ֆիլմի դեպքերից 8 տարի անց: Սյուժեի կենտրոնում Փիթի մարմնավորած կասկադյոր Քլիֆ Բութի կյանքն է Հոլիվուդում: Ֆիլմի բյուջեն մոտ 200 մլն ԱՄՆ դոլար է: Ամերիկացի ռեժիսոր Դեւիդ Ֆինչերի ֆիլմացանկում են տիտղոսակիր այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք են «Seven» (1995), «Fight Club» (1999), «The Curious Case of Benjaշin Button» (2008), «The Soշial Network» (2010) եւ այլն: Նա «Գրեմմի», «Բաֆթա», «Ոսկե գլոբուս» մրցանակների դափնեկիր է, ինչպես նաեւ երեք անգամ առաջադրվել է Օսկարի՝ «Լավագույն ռեժիսոր» անվանակարգում:

Ամերիկահայ դերասան Կարեն Կարագուլյանը հայտնի է ռեժիսոր Շոն Բեյքերի ֆիլմերում մարմնավորած դերերով: Նրա մասնակցությամբ «Անորա» ֆիլմը 2025 թվականին շահեց 5 օսկար՝ այդ թվում եւ «Լավագույն ֆիլմ» անվանակարգում:

● *Փետրվարի 10-ին՝ ժամը 20:00-ին, Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Ծաղիկներ Էլջերնոնի համար» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԲԱՆԿԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Կենտրոնական բանկի անկախությունը, եւ ինչպե՞ս է այն չափվում:

Սուրեն Գալինյան, 39 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան՝

- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Եթե բանկը հաճախորդի հաշվեհամարին գումարը երկու անգամ է փոխանցում, ապա պարտավոր է արդյոք հաճախորդը վերադարձնել այդ գումարը:

Գոհար Նազարեթյան, 41 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, հաճախորդը պարտավոր է այդ գումարը հետ վերադարձնել, քանի որ անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերի կամ գործարքի սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի 1-ին կետ):

Այս կանոնը կիրառվում է՝ անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետեւանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը Armenpress-ից



Միքելանջելոյի՝ Սիքստինյան կապելայի առաստաղի որմնանկարի էսքիզն աճուրդում վաճառվել է ռեկորդային՝ 27,2 միլիոն դոլարով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 - 7 0 + 5
Կոտայքի լեռներ	- 3 - 6 0 + 4
Կոտայքի նախալեռներ	- 1 + 2 + 4 + 7
Գեղարքունիք	0 - 5 0 + 4
Լոռի	- 1 + 4 + 7 + 10
Տավուշ	- 1 + 3 + 7 + 10
Արագածոտնի լեռներ	- 3 - 7 - 1 + 2
Արագածոտնի նախալեռներ	- 1 + 3 + 3 + 6

Արարատ	0 + 3 + 6 + 8
Արմավիր	0 + 3 + 8 + 10
Վայոց ձորի լեռներ	-3 - 6 - 1 + 2
Վայոց ձորի նախալեռներ	0 + 3 + 9 + 11
Սյունիքի լեռներ	-3 - 6 - 1 + 2
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 + 6 + 10
Սյունիքի հովիտներ	+ 3 + 6 + 8 + 13
Երեւան	+ 1 + 3 + 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **09.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*